Embassy of the United States of America

Defense Threat Reduction Office
Yerevan, Armenia

24 մայիսի, 2011թ.

Հղում՝ 11-016

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
պ-ն Արմեն Երիցյանին

Մեծարգո պ-ն Երիցյան,

ԱՄՆ դեսպանությունում Պաշտպանական վտանգի նվազեցման գրասենյակը պատիվ ունի հայտնելու ԱՄՆ-ի Պաշտպանության դեպարտամենտի՝ Պաշտպանական վտանգի նվազեցման գործակալության (DTRA) ներկայացուցիչների խմբի այցի մասին ս.թ. հունիսի 13-17 ժամանակահատվածում: Այցի նպատակն է շարունակել բանակցել Հայաստանում Կենսաբանական վտանգի նվազեցման ծրագրի հաջող իրականացման համար անհրաժեշտ պահանջների և ռազմավարության մշակման գործընթացը:

Խումբը, որը ղեկավարում է DTRA –ի հայաստանյան ծրագրի ղեկավար՝ պ-ն Ջեֆֆրի Դ'Էմուրը, կցանկանար միանալ ԱՄՆ-ի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (ՀՎԿԿ) մասնագետների խմբին, որը նույն ժամանակահատվածում Հայաստանում հանդիպումներ է անցկացնելու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու և վերջնականացնելու առաջարկված աշխատանքային պլանը և մշակելու գործողությունների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ՀՀ կառավարության առաջնահերթությունների: Պ-ն Դ'Էմուրի խումբը նաև կներկայացնի ծրագրի նորընտիր ինտեգրող կապալառու կազմակերպությանը, որը աշխատելու է ծրագրի բոլոր հիմնական շահառուների հետ՝ Հայաստանում կենսաբանական վերահսկողության համակարգի ստեղծման համար:

Կրկին շնորհակալություն եմ հայտնում ծրագրին Ձեր շարունակական աջակցության համար: Հարցեր առաջանալու դեպքում, կարող եք ինձ դիմել ԱՄՆ դեսպանատուն՝ 010 494034 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի antleje@state.gov հասցեով:

Հարգանքով,

Ջոնի Ե. Էնթլ
Պաշտպանական վտանգի նվազեցման գրասենյակի ղեկավար
ԱՄՆ դեսպանություն, Երևան

Պատճենը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ առողջապահության նախարարություն